# ՃՇՄԱՐԻՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՄԱՍ 2)

**1 ԹԱԳ. 18:1-16**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. **ԾԱՌԱՅՈՂԻ ՍԻՐՏ – SERVANT'S HEART**
2. **ՀՈՎՎԻ ՍԻՐՏ – A SHEPHERD'S HEART**
3. **ԱՆԿԵՂԾ ՍԻՐՏ – A SHEPHERD'S HEART**

*…քնար նվագել գիտի. Եւ քաջ, զօրավոր, պատերազմող, ճարտասան, և գեղեցիկ տեսքով մարդ է. Եւ Տէրը նորա հետ է: (ավելացնենք որ նա նաև ԼԱՎ ԸՆԿԵՐ է)*

***12** Եւ Սաւուղը Դաւիթի երեսիցը վախենում էր, որովհետև Տէրը նորա հետ էր. Բայց Սաւուղիցը հեռացել էր:*

***14** Եւ Դաւիթն իր ամեն ճանապարհների մէջ իմաստութեամբ էր վարվում. Եւ Տէրը նորա հետ էր:*

***28** Եւ Սաւուղը երբոր տեսաւ և հասկացաւ, որ Տէրը դաւիթի հետ է.*

*Մեկ անգամ մի բրիտանական պարբերական մրցանակ առաջարկեց «ընկեր» բառի լավագուն սահմանման համար: Հազարավոր ստացված պատասխանների թվում էին հետևյալները.*

- *«Նա, ով շատացնում է ուրախությունները, կիսում է տրտմությունը և ում ազնվությունն անխախտ է»:*
- *«Նա, ով հասկանում է մեր լռությունը»:*
- *«Ժամացույց, որն աշխատում է ամեն ժամանակ և երբեք չի դանդաղում»:*

***Հաղթող սահմանումը հետևյալն էր.***
***«Ընկերը նա է, ով ներս է մտնում, երբ ողջ աշխարհը դուրս է գնացել»:***

*Սկսելով իմ ուսումնասիրությունն այս շաբաթ՝ ես նայեցի **Վեբսթերի բառարանը**՝ տեսնելու համար, թե ինչպես է նա սահմանել «ընկեր» բառը: Իմ դուրը եկավ **«ընկեր»** բառի երկրորդ սահմանումը.* Ընկերը սահմանված է որպես «անձ, ով որևէ պայքարում նույն կողմում է, ինչ դուք»:

### Ի՞նչպես է Հիսուսը սահմանել «ընկեր» բառը:

***(Մատ. 22:36-40, Հով. 15:15, 1 Թագ. 18:1-4, )***

*Մատ. 22:36-40 - Վարդապետ, ո՞ր պատուիրանքն է մեծ օրէնքում. **37** Հիսուսն էլ ասեց նորան. Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտով, քո բոլոր անձով եւ քո բոլոր մտքով: **38** Սա է առաջին եւ մեծ պատուիրանը: **39** Երկրորդն էլ սորա նման. Սիրիր քո **ընկերին** քո անձի պէս: **40** Այս երկու պատուիրանքից կախուած են բոլոր օրէնքը եւ մարգարէությունները:*

*Հով. 15:15 - Այլ եվս ծառա չեմ ասում ձեզ, որովհետեւ ծառան չգիտի, թէ իր տէրն ինչ է գործում. բայց ձեզ բարեկամ (ընկերր) ասեցի, որովհետեւ ամեն ինչ որ լսեցի իմ Հօրից, իմացրի ձեզ:*

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

1 Եւ երբոր Սաւուղի հետ խօսեց և վերջացրեց. Հովնաթանի սիրտը կապվեց Դավիթի սրտի
հետ. Եւ Հովնաթանը նորան իր անձի պէս սիրեց: 2 Եւ նույն օրը Սաւուղը նորան առավ և
թույլ չտվեց որ ետ դառնա իր հօր տունը: 3 Եւ Հովնաթանը և Դավիթը ուխտ արին,
որովհետև նա իր անձի պէս սիրում էր նորան: 4 Եւ Հովնաթանն իր վերարկուն հանեց և
այն ու իր հանդերձները մինչև իր սուրը, իր աղեղը և գօտին Դավիթին տուավ: 5 Եւ
Դավիթը գնում էր ամեն տեղ, ուր որ Սաւուղը նորան ուղարկում էր, և իմաստութեամբ էր
վարվում. Եւ Սաւուղը նորան պատերազմական մարդկանց վրա դրավ, և բոլոր ժողովրդին
և Սաւուղի ծառաներին էլ հաճո եղավ:

15 Եւ երբոր Սաւուղը տեսավ, որ նա իմաստութեամբ է վարվում, նորա երեսից վախենում
էր: 16 Եւ բոլոր Իսրայէլն ու Հուդան Դավիթին սիրում էին, որովհետև նորանց առաջին
նա էր դուրս եկող մտնողը:

20 Եւ Սաւուղի Մեղքող աղջիկը սիրում էր Դավիթին.

**UPWARD: God**

**Դեպի վեր: Աստված**

**We agree to be devoted to and developing a supernatural relationship with God by - Knowing God through prayer, worship and studying His Word.**

**Մենք համաձայն ենք լինել նվիրված և զարգացնել գերբնական հարաբերություն Աստծո հետ – աղոթքի, երկրպագության եւ Իր խոսքի միջոցով:**

***Inward: One-another***

***Դեպի ներս: միմյանց հանդեպ***

***We agree to be devoted to and developing a deep love for one another by - Knowing each other through fellowship and caring for one another.***

***Մենք համաձայն ենք լինել նվիրված և զարգացնել խոր սեր միմյանց նկատմամբ ըստ - ծանոթության և ընկերակցության միջոցով, և հոգատար լինելով միմյանց հանդեպ:***

## I. Ընկերները ցուցաբերում են պատասխանատվություն միմյանց հանդեպ: Friends show up for each other.

*4 Եւ Յովնաթանն իր **վերարկուն** հանեց եւ այն ու իր **հանդերձները** մինչեւ իր **սուրը**, իր **աղեղը** եւ **գօտին** Դավիթին տուավ:* **(Ի՞նչներ պատճառը որ տվեց)**

- **Ըստ ավանդույթի Յովնաթանը հանձնեց իր թագավորությունը Դավիթին: Նա հետևեց օծությանը այլ ոչ թէ ավանդույթին: Նա հասկացավ որ Աստծո Յոգին հեռացել էր Սավուղից և իջել էր Դավիթի վրա:**

***Աստված մեզ տալիս է ընկերներ, որը օգնում է մեզ հասնելու Աստծո կողմից մեզ տրված նպատակին և ճակատագրին:***

*God gives us friendship that will help us to accomplish our God-given purpose and destiny.*

***Հելեն Քելլերը, որը ծնվել է կույր և համր, ասել է. «Ես կնախընտրեի քայլել ընկերոջ հետ մթության մեջ, քան միայնակ լույսի մեջ»:***
***– "Ծառայել Պատվով", Սթիվ Դիքսոն.***

*Halen Keller, born blind and deaf, said, "I would rather walk with a friend in the dark than alone in the light." —serving with honor, Steve Dixon*

## II. Ընկերները կյանք են խոսում (հռչակում) միմյանց հանդեպ:
**Friends speak life to each other.**

*1 Թագ. 19:1-4 - Եւ Սավուղն իր որդի Հովնաթանին և իր ամեն ծառաներին ասեց,*
*որ Դավիթին մեռցնեն: 2 Բայց Սավուղի որդի Հովնաթանը շատ էր սիրում Դավիթին.*
*Եւ Հովնաթանը <u>Դավիթին հայտնեց և ասեց.</u> Իմ հայր Սավուղը ուզում է քեզ սպանել.*
*Ուրեմն հիմա մինչև առավոտ զգույշ կաց, և մէկ ծածուկ տեղ նստիր և թաքնվիր: 3 Եւ*
*ես դուրս կգամ և իմ հօր մօտ կկանգնեմ այն դաշտում ուր որ դու կլինես, և քեզ*
*համար իմ <u>հօր հետ կխօսեմ,</u> և ինչ որ իմանամ՝ քեզ կպատմեմ: 4 Եւ Հովնաթանը*
*<u>Դաւիթի մասին լավ խօսեց իր հայր Սավուղի հետ</u>, և նորան ասեց. Թող թագավորը*
*իր ծառա Դավիթի դէմ մեղք չգործէ. Որովհետև նա քեզ դէմ մեղք չէ արել. Եւ նորա*
*գործքերը քեզ համար շատ լավ են:*

***Անկեղծ ընկերակցությունը ժամանակի ընթացքում ճիշտ արժեքներ է ձեռք բերում: Ընկերոջ խրախուսանքը ճիշտ ժամանակին անգնահատելի է:***

*True friendship are design to increase in value as they are lived out. The encouragement of a friend's very presence is immeasurable.*

## III. Ընկերները կանգնած են միմյանց (մեկը մյուսի) համար:
**Friends stand up for each other.**

***…Բարձրակարգ և արդյունավետ ընտանիքի պատկերը. Ընտանիքի անդամները սիրում են միմյանց, ներում են միմյանց, քաջալերում են միմյանց և տոնում միմյանց հաջողությունները:***

*…Highly productive family: family members love one another, forgive one another, encourage one another, and celebrate one another's successes."*

*6 Եւ երբոր նորանք գալիս էին և Դավիթը Փղշտացիին մեռցնելուց ետ էր դառնում*
*Իսրայէլի բոլոր քաղաքներից կանայք դուրս եկան երգելով և պար բռնելով սավուղ*

*թագաւորին դիմավորելու թմբուկներով, ուրախութեամբ և ծնծղաներով: 7 Եւ պար բռնող*
*կանայքը պատասխան տալով երգում էին և ասում.*
*Սաւուղն իր հազարավորներին զարկեց,*
*Եւ Դավիթն իր բյուրավորներին:*
*8 Եւ Սավուղը շատ բարկացավ, և այս խօսքի համար նեղացավ, և ասեց. Բյուրավորները*
*Դավիթին տվին, բայց ինձ տուին հազարավորները. Եւ հիմա մնում է նորա համար միայն*
*թագավորությունը: 9 Եւ այն օրից ի վեր Սավուղը ծուռ աչքով էր նայում Դավիթին:*
*10 Եւ հետևեալ օրը Սավուղի վրա Աստուածանից չար ոգի եկավ, և նա տան մէջ*
*մարգարէություն արավ և Դավիթն ուրիշ ժամանակների պէս իր ձեռքով քնար էրածում.*
*Եւ նիզակը Սավուղի ձեռքին էր:*

## Ամփոփում

1. **Արդյո՞ք ես որևէ մեկի համար լավ ընկեր եմ: Ինչպե՞ս եմ ես դա ցույց տալիս:**
   Am I a great friend to anyone? How do I show it?
2. **Երեք հարցեր խորհելու համար.**
   Three questions to ponder:
   - **Արդյո՞ք ունեմ ես լավ/մտերիմ ընկեր իմ կյանքում:**
     Do I have a quality friend in my life?
   - **Արդյոք ես գնահատում եմ այդ ընկերներին այնպես, ինչպես ես կցանկանաի գնահատվել իրենց կողմից:**
     Do I value those friends the way I would like to be valued?
   - **Արդյո՞ք ես աղոթում եմ իմ ընկերների համար և օրհնում նրանց:**
     Do I pray for and bless my friends?
3. **Արդյո՞ք ես հանդիսանում եմ որեէ մեկի խորհրդատուն: Ես ինքս խորհրդատու ունե՞մ:**
   Am I mentoring anyone? Do I have a mentor?